ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 19 >> հոկտեմբեր 2016թ. N 94

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արևադաշտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի և կատարված շինարարական աշխատանքների հաշվառման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ռ. Երվանդյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել երկու աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Ռ. Երվանդյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Արևադաշտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ն. Բաբայանին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավար Հ. Օհանյանին, Հայ կրթական հիմնարկության նախագահ Վ. Հակոբյանին, Հայ կրթական հիմնարկության Հայաստանի մասնաճյուղի գործադիր տնօրեն Ա. Հարոյանին, շինարարության գծով պատասխանատու Ն. Փիրումյանին և <<Սպադավմար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչին (համաձայնությամբ):
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի հոկտեմբերի 2-ի
N 24 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Երվանդյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.
Ա. Ղորղանյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.
Ա. Հովհաննիսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.
Լ. Հարությունյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.
Գ. Մուրադյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ.
Ա. Օսիպյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**